ՎԱՀԱՆ ՎԱՐԴԱԶԱՐԻ ՀՈՎՍԵՓՅԱՆ

ԽՍՀՄ Ժողովրդական կոմիսարների խորհրդին կից Կենտրոնական վիճակագրական վարչության կառավարիչ
(1926-1930թթ.)

Վահան Վարդազարի Հովսեփյանը ծնվել է 1880թ. Ելիզավետպոլ քաղաքում՝ վաճառականի ընտանիքում:

1895թ. ավարտել է տեղի 6-ամյա ուսումնարանը, ապա Կովկասյան հողաչափական տեխնիկումի կուրսերը:

1904թ. հրապուրվելով հեղափոխական, սոցիալ-դեմոկրատական գաղափարներով, գիմնազիայի բարձր դասարանների աշակերտների և ուսանողների հետ միասին ստեղծել է մարքսիստական խմբակ:

1905թ. սկսած եղել է հեղափոխական պայքարի ակտիվ մասնակից, որի համար հալածվել է դաշնակների կողմից:

Քաղաքական հայացքների համար հետապնդվել է իշխանությունների կողմից, ձերբակալվել և նույնիսկ ենթակա եղել արտաքսման:

Կուսակցական գործունեությունը սկսել է ծավալել 1920թ.-ից՝ ք. Թիֆլիսում, սկզբում որպես շարքային աշխատող, ապա Թիֆլիսյան Կոմիտեի ապարատի գործուղմամբ տեղափոխվել Հայաստան՝ կատարելով տարբեր կուսակցական աշխատանքներ և զբաղեցրել ղեկավար պաշտոններ:

1926-1930թթ. զբաղեցրել է ԽՍՀՄ Ժողովրդական կոմիսարների խորհրդին կից Կենտրոնական վիճակագրական վարչության կառավարչի պաշտոնը:

Վահան Հովսեփյանը վախճանվել է 1937 թվականին: